

ՔԱՆՈՒՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ հաւար 12 ծր.
 Տարեկան 6 »
 Վեցամսեայ Արշաւահիւսակի հաւար տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »

Աւերիկայի հաւար 3 ծր.
 Տարեկան 4.50 »
 Վեցամսեայ 1.50 »

Ծանուցան շողը առաջին երեսին հաւար 40 ս. իսկ վերջին երեսի հաւար 20 սանթիւն է. երեքին անկէ անգամներու հաւար 20 0/0 զեղջ կը լայն
 Վառնայի հաւար ձև 14 սանթիւն

ՇԱՐՇՈՒՄ

Redaction du journal
 "Charjoun"
 Varna (Bulgarie)
 Արշաւահիւսակի հաւար 15 ծր.
 Վեցամսեայ 8 »
 Պուշկարիոյ հաւար 12 ծր.
 Տարեկան 6 »
 Վեցամսեայ 8 »
 Քաղաքի և քաղաքի մէջ
 Գրութիւն և լէտի տպարան

ՄԱՐԿԻՆ ԱԶԳԱՅԻՆՆԵՐ ԲԱՂՈՒՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐ ՏՄՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ՇԱՐՇՈՒՄԻ ԲԱՏՆԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏՆԵԳԻՆԸ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՆԿ ՎՃԱՐԷ

ՊԱՏԺԵՆՔ ԲԱՐՈՅԱՊԵՍ

Յունիս 7ի «Մշակուած ունս»-ն լոճէ վրէժմիան թերթին Օրգէսայից զրկված մի հեռագիրն է արտասուված, որով հայորդիւն է թէ Օրգէսայի ամենագլխաւոր Կերիբասան փողոցում շորս հայեր յարձակվել են Ամերիկեան քաղաքացի Գարեգին Չիթճեանի վրա և տասնամէկ մահացու հարուած տալով սպանել են:

Ուրեմն, դժբախտաբար, մեր գուշակութիւնը արդէն կատարված է եղել երբ մենք բողոքում էինք յուսալով որ գոնէ երկրորդ սպանութիւն չի կատարվի:

Ուրեմն Հնչակեանները իրենց ինտրիգները մէջ ոչ մի դեր չունեցող Գալ Միսիոն սպանուց յետոյ, նոյն գաղանթի մեջ սպանեցին և Չիթճեանին:

Այս երկու սպանութիւններով հին Հնչակեանները իրենց ճակատին խարանդեցին պարզ և զազան ոճրագործի տիտղոսը:

Ես իբրև զաշնակցական թէև ամենաբուռն հակառակորդ վերակազմակերպի, որոնց մէջ վատ տիպեր իսկապէս կան, և իբրև հայ ընկճվելով յեղափոխութեան անունով զուր տեղը սպանված այդ երկու երիտասարդների գիտելի առջև, առաջարկում եմ Բուլղարիայի մէջ ապրող հայ երիտասարդութեան, առանց կուսակցական խտրութեան, հաւաքական ստորագրութեամբ մի պարսաւազիր պատրաստել և ուղարկել հին Հնչակեան կենտրոնին և ցոյց տալ նրանց որ հայ երիտասարդութիւնը չի կարող անտարբեր մնալ այդ տեսակ զազանային ոճրագործի հանգեպ և սպանուել, որ եթէ այդ ոճիրները շարունակվեն այն ժամանակ երիտասարդութիւնը իր կողմից միջոցներ ձեռք կառնի լիբր ոճրագործութեան հեղինակներին պատժելու:

ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ

Վերջին պահուն տեղեկանում ենք ունայ թերթերից, որ մայիսի 30ին (հ. տ.) Օրգեսայում սպանել է Գարեգին Չիթճեան, Հանգուցեալը, ինչպէս յայտնի է, «Վերակազմաւոր Հնչակեան մարմնի եռամսեայ անդամներից մէկն է, որ երկար տարին երկր ընթացքում—սխալ թէ ուղիղ ճանապարհով—աշխատում էր յօգուտ մեր ընդհանուր ազգային դատի: Ինչ բացարձակութիւն էլ տրել այդ սպանութեան, նա կը համարուի մի ծանր ոճիր և մի անհերքելի սպանուց նրա հեղինակների բարոյական անանկութեան: Երբ հակառակութիւն կայ անհատների և խմբերի միջև, կարելի է մղել օրինաւոր կռիւ, կարելի է վիճել, յարձակել, ամբաստանել, իսկ զեծումների դէպքում՝ դատի հրաւիրել ամբաստանաւորներ: Բայց «յաղթանակը» տանելու համար զիմել զաշոյնի, թոյնի կամ մասնաւորութեան, — դա զազափարական մարդկանց գործ չէ, այլ քրդական թայֆայականութեամբ կուրացած ոճրագործների:

Մենք ուրախ կը լինէինք յայտարարուած տեսնել, որ այդ զարշի գործողութիւնը, ինչպէս և Փօթիում տեղի ունեցած Եահէնի սպանութիւնը՝ ոչ ուղղակի և ոչ կողմակի առնչութիւն չունեն այս կամ այն յեղափոխական խմբակի հետ և որ հայ զազափարական շրջանները ազատ են այդ տեսակ եղբրնափորձերից:

ԵՐՈՇԱԿ

«ԲԱՂԱՒՈՐ» ԲՈՐԻՍ

Այս վերնագրով բուլղար «Սօֆիսքի վէտոմոստի» թերթը հետեւեալ յօդուածը ունի հրատարակած:
 «Բիտոլիայի նահանգում կատարուելը շատ լուրջ է, որովհետեւ»

անէ այնտեղ է գտնվում վտանգաւոր Բորիս Սարաֆօվը, որի գլուխը Բ. Գրան կողմից 1,500 ոսկի է գնահատված:

Հինգ ամսվան ընթացքում Սարաֆօվը պատրաստեց մի մեծ հրոսարար և երկու ճակատամարտ ունեցաւ թուրքերի հետ Մալէշէվեան լեռներում, դրանից յետոյ նա անհետացաւ, կարծես գետնի տակը անցաւ: Վերջը նա կրկին մէջտեղ ելաւ Բիտոլի մօտերը, մի լաւ կազմակերպված հրոսարարի հետ, որին հետեւում էր ձիերի մի կարգված բաժնված ունեւորով, զէնքով և ուժանակով: Քանի որ ընդհանուր ապստամբութիւնը յայտարարված չէր, Սարաֆօվը ուղեց մասնակցի Սելանիկի գործերին: Ապրիլի վերջերին Սարաֆօվը գալիս է Սելանիկ, կաթոլիկ վարդապետի ընդգծաներում ձայնված, և գործի սարսափելի օրը ինքն է ղեկավարում դաւադիրներին, ու այդ գործը վերջացնելուց յետոյ կըրկին աներեւոյթանում է Մակեդոնիայի ներսերում:

Սելանիկի դաւադիրութիւնից յետոյ Սարաֆօվի մասին շատ քիչ է լսվում: Ինչպէս երեւում է այդ դաւադիրութեան հետեւանքը նրան հրասթափեցրեց. նա յոյս ունէր որ Երոպան կը միջամտէր: Բայց այդ հրասթափումը չի յուսահատեցրեց Սարաֆօվին: Յիօրիայի, Կոստուրի և Բիտոլիայի բնակիչները բոլորն էլ յեղափոխութեան են փարած: Սարաֆօվը նրանց «Բորիս թագաւորն» է, և առանց դժուարութեան կարող է նրանց մէջից հինգ հազար քաջ կուռզներ հանել:

Սարաֆօվի ճարպիկութեան համար հետեւեալ փաստն են բերում: Նա տաս ընկերների հետ գընում է մի գիւղ ապստամբներ գտնելու համար, նրան պահակի երկու կողմից թուրք զինւորներ են գալիս:

Այս պարագայում ոչ փախչել կարող է և ոչ կուռ բռնվել, ու զուր տեղը սպանվել, ուստի հետեւեալ կարգադրութիւնն է անում

— Հրացանները թողեցէք. համազգեստները ցորենի մէջ պահեցէք: և զիւղական զգեստները հանեցէք:

Մի քառորդ ժամից յետոյ թուրքերը գալիս են: Մարտակազմակերպները տները պաշտպանեցին և անհետացաւ:

— Ձեզ մօտ յեղափոխականները եկե՞լ են. առային զիւղացից հարցնում է հազարապետը, ինչպէս ձայնով:

— Ոչ, էֆէնտի:

— Սարաֆօվին չըսեցա՞ք:

— Ինչ, Սարաֆօվի չըսեցա՞ք: Կիտանը, թող միայն ոտքը պատեղ զնէ. հաւատացած եղիր, պատուարժայի հարցնում է, որ մենք ինքներս ուք ու ձեռքը կը կապենք և կը յանձնենք: Թուրքերը գիւղային պատասխանից իսկոյն ետ են դառնում. իսկ Սարաֆօվին կապող և յանձնող զիւղացին ինքը «Թագաւոր» Բորիսն էր:

ՎԵ՛ՐԻՆ ԼՈՒՅԵՐ

Երօջական թերթերու լոյս տեսաւ հետեւեալ հեռագիրը Կ.Պոլսից.

«Թիւրքաց կառավարութիւնը անհանգիստ՝ նոր հայ յեղափոխական խմբերի երեւան գալով ոտը թուրք Ռուսաստանից անցել են Բայազէդի ու Սասունի կողմերը խիստ միջոցներ է ձեռք առել սահմանները պահպանելու համար, Հայերը փոքրիկ խմբերով անցել են Բայազէդի շրջանը և այդտեղից ճանապարհ բռնել Կէպի Սասունի լեռները, որ Թիւրք ապահով են հալածանքից»:

Մեր թղթակիցը հայորդի է մեզ վանից (մայիս 6), որ յունւար ամսուն ձեռքակապաւոր զորք գետը զատապարտած է ձեռք բերող զորքերու թիւն (100 տարի) վերքը բուժելու ջրային ջրէն զահիճները բնաւ հող չեն տանում նրա մասին: Փայտի օգնու.

Թեամբ հիւանդը կարողանում է ման գալ... Լուր կայ... որ առողջանալուց յետոյ բանտարկեալը պիտի փոխադրուի Կ. Պոլսիս (Դրօշակ)

ՍՅՈՒՄՆ ՀԱՅ ՄԱՏՈՒԻՒՆ ՌՕՄԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ

Նախորդ ամսոյ 30-ին, ուրբաթ օրը Եւրոպոյ Հայոց Առաջնորդ Գեր. Գեորգ Սրբազան Իւթիւճեան Սուչաւայէն ի քաղաքս ժամանեց նշանակեալ Մատուռն օձելու համար:

Նորին Գերապատու թիւն հիւրեկալուեցաւ Սէնթորոս Սողոմոնեան վարժարանին մէջ, ուր լուսաճող հիմնադիրն արդէն յատուկ տեղ պատրաստած ու կահաւորած է այդպիսեաց համար: Յաջորդ օրը, շաբաթ երեկոյ, հանդիսաւորապէս ժամասացութիւն սկսաւ ի դերեզմանատան, որ քաղաքէն 10-15 վայրկեան հազիւ հեռու կը գտնուի: Կեդրեւեմէ կարացրեցան աւուր պատշաճի օրհնութիւնքն: Օձուեցաւ խորանն նորա պատկերներն, խորհրդանշաններն և խաչկալի բոլոր պատկերներն շքեղ արարողութեամբ: Նորին Սրբազանութեան կաշակցելին Ձ քահանայք, քաղաքապետ շախաւուր էր, Կիրակի առաւօտը ժամասացութեան սկսան ժամը 7 1/2-ին: Հրաւիրեալ էին քաղաքի Մէտրապօլիտ, Գաւառապետ, Բաղաքապետ հրամանատար ևն: Ներկայ էին Քաղաքապետ, մի քանի սպաներ և բաւական թուով ազնուական դասն:

ՍԵՄԻՆ ԱՌՁԵԻ

Տ. ԲՕԼԵԱՆՕՅ(Ը)

Ձեզի, ազնիւ ընկերուհիներս, Ս. Պ-եան, Պ. Պետ-ն եւ թ. Ս-եան Ա. Յ.

(Շարժեակիտրիւն 24 քիւիւն)

Եթէ ուրիշ մէկն ըսած ըլլար թէ քեզ պատիկ ես դուն, կրնա՞յիս տուելին պիտի սրտմտէր, բայց քաննի որ Սթոյչեվան կընէր այս պիտուութիւնը, չքողոքեց: Այլ աւելի ժիվքան խօսիլ սկսած ըլլալու պատճառով, իսկ Կոլօջքան ուսուցչակիներուն երկուքն այ կը սիրէր, նոյն իսկ քաղաքայինը քիչ մը աւելի: —Գու կարծիքիդ նայելով, յանցանքը՝ ամուսնացած ըլլալուն համար է՝ Հարուստ մարդ աւեր է եղեր... բայց չէ՞ որ ամէնքնիս ալ պիտի ամուսնանանք... Ահա դուն նշանած ես... Մարիքա խիտ կերպարանք առնելով ըսաւ: —Բայց անոր պէս պիտի ամուսնանանք: Ասանկ կուրօքէն... Ժիվքան շարունակեց. —Գու կը մոռնաս, Սթոյչեվա, թէ ամէն մարդ քեզի պէս չկրնար ապրիլ, քու քաջածի կրնուի: Այս բաները սովորաբար գիւղային ուսուցչուհի կը զգուցեն: Բայց կիսա մերժեց զանոնք: — Ինչո՞ւ չկրնան: Ես ի՞նչ եմ,

մէն, Ռուսէն ընտանիք: Եկեղեցին փոքր լինելով օտարներէն չաւերն ետ դառնալու կը հարկադրուէին:

Իւթիւճեան Սրբազան, ամենայն փառաւորութեամբ, Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց, կարգաց և կանոնաց համաձայն զՄատուռն օձեց յանուն սրբոյն Յովակիմայ և Աննայի: Իւր ձայնն շատ քաղցրահնչուն և գրաւիչ էր, ամենքն յափտակեալ մտօք կուեկընդրէին, որք թէպէտեւ չէին հասկնար հայ լեզուն (հայերէն ոմանք կը հասկնային բաւական), սակայն կըզգային և միանգամայն կը հիանային հայկական ուղղափառ Եկեղեցւոյ սոյն փառասր արարողութեան վրայ: Աւելորդ է ըսել թէ պատարագիչը Սրբազանն էր, որ յուզեալ զգացմամբ մի քարոզ խօսեցաւ թէեւ կարճ, այլ խիտ ազդու, սրոյ պարունակութիւն էր հետեւեալն մատուորապէս:

Արեւի, Նոյի և Արահամու Աստուծոյ մատուցած պատարագներէն յետոյ հին եկեղեցին կազմուեցաւ, շինուեցաւ նախ խորան վկայութիւն, աստեղ յաջորդեց Սողոմոնեան տիկնորան ճաճարն, որոյ ներքին և արտաքին կողմերն ոսկեպատ էին սև խորհրդանշաններով լի սակայն նիւթական Եկեղեցին արհաւիր նշանակութիւն չունի, զի բարձրեալն ի ձեռնադրած ուսմարս սրնակիր, այլ մարդկային մտքոր սրահիւրու մէջն:

Միւսմանայոց եկեղեցեաց թուոյն վրայ հատ մ'ալ աւելցաւ, ես կը բարեմաղթեմ որ այս եկեղեցին շինանի Լեհաստանի և Մաճառիտանի հայոց այն քաղաքի եկեղեցեաց, որք այսօր հայութեան համար իսպառ կորած

են իւրեանց մողովուրդներով, զի չունէին վարժարաններ, վասն զի նախ վարժարան և ապա եկեղեցի, որ Ազգին համար երկու հօր թիւերով միայն կրնայ ապրիլ և այդ թիւերն են մին մանչերու և միւսն այլեկանց վարժարանները որոնք որչափ զօրաոր լինին՝ այնչափ աւելի բարձր ներդրեալութեան տէր կը լինի Հայոց եկեղեցին և նորա մողովուրդն ալ այնչափ աւելի տեւական կեանք կուենայ:

Սորին ցաւ յայտնեց քարոզիչ Սըրբազան տեղոյս վարժարանի 3 տարիէ ի վեր փակուած լինելուն համար և բուն փափաք յայտնեց ու յորդորեց որ վերստին բանան: Գովեց և օրհնեց երկրիս իմաստուն վեհապետն և իւր կառավարութիւնը, որ իւր հպատակ ամէն ազգաց՝ ընդ որս նաեւ Հայոց կատարեալ ազատութիւն տուած է և շնորհ ըսելով առ հայ ժողովուրդ թէ Ռուսմանչայերն իթէ հոգ չ'տանին մայրենի լեզուն կը մեղանչեն երկրի ազնիւ օրինաց առջեւ, որոյ նպատաւոր հողմերէն օգտուիլ չեն ուզեր կը մեղանչեն առաւել եւս այս երկրի հայերն իթէ իւրեանց Ազգ. գոյութիւնն պահպանելու սրբազան պատահանութիւն չ'մանչայեն ու չ'զործադրեն: Նորին Սրբազանութեան խաղկան նպատակն էր հասկց ընել թէ առանց հայ վարժարանի Ռուսմանչայոց եկեղեցիներն ալ կը կորուսին քիչ ժամանակէն, որպէս ի հնուէն կորսուեցան Լեհաստանի և Մաճառիտանի հայ եկեղեցիներն առ ի չ'զոյժ վարժարանաց:

Օրհնեց զխիտասակն հանգուցեալ հիմնադրութիւն և զժամանագորոյս, որք

հաւատարմութեամբ ի գիւնիս ամբն լուսահողի հանգուցելոյն Ս. փափաքն: Եկեղեցին ապաւնեցաւ ժամը 3 1/2 և երկուսն բազմութիւն ցրուեցաւ քաղցր ապաւորութեամբ զքանքեալ Գեր. Իւթիւճեան Սրբազան զշիյունիս և սեկեցեալ ի Սուչաւա 3 օր միայն մնալով ի քաղաքս հիւր առ մեզ:

ԻՆՏՈՂՈՒԹԻՒՆ

Շարժում լրագրոյդ 520 թիւ փերթիս մէջ Բարիզէն մեր ստացած Մամուսոյ խնայարկութեամբ անուս նոր գրքոյի ծանուցումն Գեր. Իւթիւճեան Սրբազանի նկատմամբ գրուածն կ'որոշայի այն պահուն, յորում նորին Սրբազանութեան հիւր էր վարժարանիս, թերթի մեծ քանակութեամբ քննարկեալ և խնդրեցի բացատրութիւն, զոր տուաւ: Ինքն արդէն այսպիսի գրուածոց կարեւորութիւն սուսողնեցէն չէ, սակայն ես այժմ այդպիսի բան պարտք մը կը համարիմ զնրկայս հրատարակութեան տալ ազգօգուտ խնդրութիւն: Ճշմարտութեան, զոր ամէն գրողներ կամ գրագէտներ սիրելու և պաշտելու որքազան պարտք մը ունին:

Ձարմանսիւն և շատ ցաւալի է քեզան ներ մեր կարգ մը գրողներու ընթացքն հանդէպ մեր արժանաւոր կղերականաց (մեր իօսքն անշուշտ անարժանաց համար չէ, որոց նկատմամբ քաղաքական լուծութիւն պահելն նոյնիսկ մեղանչել Ազգ. գոյութեան և միայն զայն եկեղեցւոյ նուիրապետականութեան առջեւ):

Մամուսոյ փոփոխութեան ի պարտ

ուրիշներն ինչ... Միթէ ես ալ չեմ ուզեր երջանիկ ապրիլ...

— Ինչի՞րք՝ երջանութեան ի՞նչ ըլլալը պիտի լինէ, — համարձակեցաւ ըսել Իրինա:

— Հարկաւ, հաստատեց Մարիքա: — Երջանութիւն, սկսաւ Սթոյչեվա — երջանութիւն չկայ աշխարհիս վրայ... Ոմանք երջանիկ ըլլան իսկ ուրիշներ տառապին, ասիկա կը նշանակէ որ թէ անոնք եւ թէ ասոնք ապերջանիկ են, միայն այս տարբերութեամբ որ մէկու անբախտութիւնը կըսուի տանջանք, թշուառութիւն, իսկ միւսինը՝ գեղիւթիւն, ապակա՞ռութիւն ու հասարկութիւն...

— Դուն ծայրայեղ ես Սթոյչեվա, պատասխանեց ժիվքան, երրոր չեմք որ մատենիս վրան գնինք... Գու կը կարճեմ թէ քու Ջօրքոյ դժբախտ է, որ իսկապէս... — Ինչպէ՞ս կարծել... Ինքը խոստովանեցաւ... Առջեւ լացաւ... արցունքով զիս ողորդեց... Կարծեր եմ թէ դժբախտ է... — Է, ի՞նչ ընելու է, Կրնա՞ս օգնել, Ո՞վ կրնայ օգնել:

Այս հարցումները շատ զարմացրին կարճահասակ ուսուցչուհին: Սեղանին վրայ ձեռնով աչքերը ժիվքային վրայ սեւեռեց և զայն մատնանշելով ըսաւ: — Ժիվքա, ո՞ր տանէ ի վեր ասանկ գործնական եղեր ես կամ թէ պիտի ստիպես զիս հաւատալ թէ... — Ինչ կայ, ըսէ, հարցուց ժիվքա յանկարծ բորբոքած: — Ինչ ըլլալը դուն շատ լաւ գիտես...

Իրինա ու Մարիքա հասկցան Սթոյչեվային ակնարկութեամբ ու ժպտեցան:

— Ինչ ըլլալը դուն գիտես... շարունակեց Սթոյչեվա, Բրօքսօֆ քեղ ուզեր է:

Ժիվքա կարուկ պատասխանեց. — Կրնայ զիս ուզել... միթէ ազատ չէ՞...

Իհարկ է... ազատ... բայց այս փոփոխութիւնն ալ, որ միաժամանակ կըլլայ քու մէջը, այս փոփոխութիւնը... Տես միշտ վէրքի վրայ կը խօսիս, թէ չեմ կրցեր Ջօրքային գարման տալ... բայց դուն ալ ազատ ես... Ժիվքա խոռոված ամուսնեցաւ: Բարեկամութեան նշարեղով այս բանը՝ սովորութեան հակառակ՝ ըրած խօսքերուն հետ ներդրութիւն խնդրեց:

— Ձեմ գիտեր, ժիվքա, ըսաւ անիկա, բայց քու մէջը պոլոթուալական բան մը... արիստօքրայիթական բան մը կայ, իբր թէ մեզի համար ես, զապարտարկեց բայց դարձեալ, ինչպէս ըսեմ... բէք հարեանցի կը նային կեանքին... Ասիկա գիտած եմ... Երբե՞ն ու մտքէս անցուցած եմ, սիյո, ժիվքա թէ ասանկ է թէ անանկ... մեզի հետ սերն է, ուրիշներու քով՝ անոնց պէս...

Թերեւս այնպէս ըլլայ, պատասխանեց բարեկամութեան ձայնը զսպելով: — Ձեմք ասիկա առ այժմ, Սթոյչեվա, ըսաւ Իրինա, ձգնեք... — Ինչո՞ւ չեմք ասիկա առ այժմ, Սթոյչեվա, ըսաւ Իրինա, ձգնեք...

Սոսակցութիւնը փոխուեցաւ Ռօսք բացուեցաւ Տ. Բրօքսօֆին բունախօսութեան մասին: Անկեղծ Սթոյչեվա:

չէվան ըսաւ թէ կատե սօքթօրը... չկրնաք քննարկելու հայր... Ա՞նչ կըրակացուց:

— Գաւառի ամբիտ մայրու կը նման ինչ...

Ոչ ոք հակաճանաչ: Իսկ Սթոյչեվա՝ սօքթօրին մասին ժիվքային կարծիքը խելու համար նախատեց զայն: Ու կրկնեց քիչ տարածանութիւնները, որոնք ցրուած էին քաղաքին մէջ սօքթօրին անհոգութեան եւ սուղ սեղանագործութեան ու այցելակրիներու մասին...

Ին վերջը բարեկամութեան համարձակեցաւ ըսելու:

— Ինչո՞ւ այսքան հարեանցի կը մտածես: Անիկա ժիվքա է ու մեր ամենէն աւելի օգտակար...

Ռօքքը դեռ չաւարտած, Աթօյչեվան զայն ընդմիջեց, ծափահարեց ու ծիծաղաձայն ըսաւ: — Տես, տես, զայն կը պաշտպանես... Տեսա՞ր, ժիվքա...

Ժիվքա պիտի ըսէր թէ ինչպէս կարելի է գաւառիկալիտ լրաց մարդ մը, որ ընկերակցականի մը իր օգնութիւնը կատարեցէ ուսումնաւարտելու համար, բայց այս մասին փակուած լինելու զայն խոռովեց, ու լռեց: Անկարելի էր ներդանայ Սթոյչեվային զէմ-նոյն իսկ խնդար բանեց:

Ասիկա ալ ամէն ուրիշ բարեկամութեանը:

— Տես, տես, կը կրկնէր Սթոյչեվան, մատնուեցար... Դուն կը սիրես զայն... Անիկա քեզ քեզի է... Միթէ մեզք է վերջապէս: Ձեմ պատի պիտի հրաւիրեմ... Երբեք նայե՞ք նշանաւոր իմ հոս եղած ստեղծ կատարուի, որովհետեւ ո՞վ գիտէ թէ

գր հեղինակն (Միսակ Գեորգի Միքայել-
եան) կը գրէ թէ Եւրոպայի Առաջնորդ
Ինքնակեան Սրբազան 6,500 ֆրանք
դրամ կը ստանայ տարեկան, մինչդեռ
միւս կողմէ նորին Սրբազանութիւն կը
քանակաւ իւր նիւթական անձուկ վի-
ճակէն Իրողութիւն ստուգելով ան-
հրաժեշտ պէտք զգացի հրատարակու-
թեան տպ գած քորպէս զի նախ Ծա-
նուցեալ գրքովի յարգոյ հեղինակն
սխալ տեղեկութեանց զոն չ'երթայ,
երկրորդ գովակեալ միտքեր, եթէ
կան, բռնութիւն, ահա դիտողութեանս
թղթական նպատակն:

Ինք. Գեորգի Միքայելոս Ինքնակե-
ան, Եւրոպայի Հայոց Առաջնորդ,
կը ստանայ 4,500 ֆրանք Մանչեսթրի
գալու թէն, 4,000 ֆրանք Բարիլէն,
և 1,500 ֆրանք ալ Մարսէյլէն, ընդ-
ամեն կը լինի 6,000 ֆրանք: Մարսէյ-
լէն ստացած գումարին փոխարէն 6
ամիս քահանայութեան պաշտօն վա-
րձու ալ պարտական է Ինքնակեան
Սրբազան, որպէս կը յայտարարէ.
Իսկ այժմ քահանայութեան այդ պաշ-
տօնէն հրաժարական սուտ լինելով
այլուս յիշեալ գումարն չըստանար և
հետեւաբար Եւրոպայի Հայոց Առաջ-
նորդ տարեթիւնէն է սոյն պահուս
2500 (երկու հազար հինգ հարիւր)
ֆրանք, յորս են նաև իւր երթե-
ւեկութեան ծախքերն:

Պատուելի Թումանյանի վերաբերու-
թեամբ գրուածն ալ կարելի է չա-
փազանցեալ համարել կարգալով Ս.
Էջմիածնայ Մայր-Աթոռայ պաշտօնա-
կան ամսաթերթին Արարաց (մայիս հո-
ւտար 15, էջ 175), յորս յարգելի իրմ-
քաբար թիւն ի միջի ալլոց իւր մասն
բուն վերջին վրայ գրած է. զոր ա-

մէն լուրջ և հայրենասէր միտք լաւ
կը մտնէ և զնահատարար կը դնուի
Արարացի խմբագրութեան յայտնած
սա հետառես և բունաւոր զագափարն
թէ Եւրոպայի մէջ կ'ընտան հայ որ-
րերն ազգին համար անօգուտ են և
պէտք է զանոնք խնամել և կրթել
բուն իսկ Հայրենիքի հողին վրայ, և-
թէ կուզենք որ չ'հորտուին անոնք
Հայութեան համար:

Մ. Կ. ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

ՄՅՏՆՁԵՆԱԿԱՆ ԴԺԳՈՂՆԵՐՈՒՆ

Մէկ-երկու շաբաթներ առաջ քա-
րհիմա՛նք մը նամակ ըստացայ, որով
կը ծանուցուէր. 350 ստորագրութիւն-
ներով հանրագրութիւն մը պատրա-
սուելով, Հնչակեան երկու հատուած-
ներու կեդրոններուն զրկուած լինելը:
Հանրագրութեան պարտականութիւնը
ինձ անձանօթ է, սակայն ակամայ կը
մղուիմ խորհելու թէ, այդ յարգելի
350 անձնաորութիւնները այնչափ
զառն փորձառութիւն ելէ վերջ ին-
չո՞ւր դեռ կը յամտին իրենց սխալ ու
բոլորովին կորուստի անուղ սեղիին
մէջ, Արդեօք 14-15 տարիներու ահ-
ռելի յուստարութիւնները — որոնք
չատ սուղի նստաւ — չ'բաւեցին բուն
իրականութիւնը մեզի ճանչցուելը:
Տօպրիչի ստուգման հետք, ծա-
նօթ բարեկամներէս — 350ներէն —
սէկը, կը ժամանայ ինձի ու իմ կար-
ծիքս ու հայնացքներս կողմէ հասկնալ
մեր արդի յեղափոխական կազմակեր-

պութիւններու նկատմամբ որուն
կարող կը պատասխանեմ, իմ ամբողջ
համակարանս Իսախակցութեան կողմը
ըլլալը, ու հայրենիքի փոխութիւնը
անոր գործունէութեան միայն ակն-
կալիս, Բարեկամս զարագկոտ շեշ-
տով մը... Այո՛, որովհետեւ զուն
5-6 տարիներէ ի վեր Բուն զաշնակ-
ցական մըն ես արդէն... ու խոր-
հրդաւոր կերպով մը գործիք շարժե-
լով... զուն հետու կապրիս...
չի գիտես թէ Իսախակցութեան մէջ
ի՞նչ խոշոր գեղձուկներ կը կատար-
ուին... տե՛ս մօտ օրէն բոլոր երե-
ւան պիտի հանենք բո՛լորը... ու
չի մոռցաւ մէկ-երկու յարգելի ա-
նունքու ալ կ'ից տալ:

Դարձեալ միեւնոյն հին յանկերգը.
5-6 տարիներ առաջ կը նախատուէի
իրր զաշնակցական (՝) հիմայ միւս-
նոյն դարձեալ, սակայն այդ յատու-
եան զօգո՛՛ բարեկամներս կրնան —
թէ փոփաք կզգան — քննութիւն բա-
նալով ստուգել Իսախակցական ըլլալս
կամ չլլալս, Բայց և այնպէս իրր հա-
յու գաւակ պարտական եմ կամ յեղ-
փոխական ըլլալս և կամ կարողու-
թիւնս շեղածին չափ ոյժ տալ յեղա-
փոխութեան, վասն զի մեր լինել-ը-
լինելը անկէ կարտուած է:

Այո՛, մենք հայերս, այր թէ կին,
երիտասարդ ու ծեր բոլորս ալ ան-
պատճառ յեղափոխական և կամ յեղա-
փոխութեան սատարող պէտք է լի-
նինք վասն զի, այն ստիպողաբար կը
պահանջէ մեր ազգային արդի օրհա-
սական զինակը, Ամօ՛ ինչ որ մուր այն
հայուն որ պարտազանց կը գտնուի:
Մեզ համար պետք չէ նշարակութիւն
ու նենայ անունը, լինի Հնչակ, Իրօ-

շակ կամ այլին, մեզ համար կարե-
ւորը բուն գործը ու գործողը պէտք է
լինի. անոր միոյն պարտիքը ոյժ տալ,
հակառակ պարագային, երկրագործ
մշակին ախտաբանն նախելով, ան-
չան կեանքին վրայ աննպատակ շարժըր-
ուող, արիւն-քրտնիք մտած կապրիւն
ախտաբանութիւնը պիտի նմանի մեր աշ-
խատութիւնն ալ, որն որ անցորդ-
ներու ծագրու ձիւմաղով ողջունուե-
ցաւ:

Բարեկամս զուն արդէն Իսախակ-
ցական մըն ես... ակնարկութեանը
մէջ այնպիսի թոյն ու անկուսութիւնով
լեցուն շեշտ մը կար որ կարծես Իսա-
խակցութիւնը, Հայաստանը քար ու
քանդ բնող, հայութեան անունը
աշխարհէն վերցնելու հետամտող թը-
նամին կզած լինէր, և կամ անոր
գոյութեան վէճ մաքառելը մեր սե-
նամեծ պարտականութիւնը:

Արդ իսօքն ուղղելով իմ այդ մը-
տնջեանակէս զօգո՛՛ բարեկամներուս
կըսեմ, բոտ թըքական ասածի — թո-
փալ քէչի սիւրբիւսիւնի չօք իստեր — ի
զգացո՞ւմն է որ զիրենք կը մղէ ըն-
դափա՛մը նայիլ Իսախակցութեան, ո՛չ
պարտներ հուսաւացէք որ Հնչակեան
այս անկանգնելի անկուսը, ինչպէս
չատ մը հայրու (որոնք ժամանակաւ
նոյն զլօյլ սակ գործելը պատիւ սե-
պեցին), անբուժելի վիշտ կզած է,
սակայն միւս կողմէն շատ գո՛՛ Իսա-
խակցութեան գոյութեանն, եթէ հա-
մայն սզգը միամտաբար մինչեւ օրս,
այդ ներքնակէս ներած մարմնի վա-
րած մար, ի՛նչ կը լինէր մեր յեղա-
փոխական արդի վիճակը: Ի՛նչ, Իսա-
խակցութեան գոյութիւնը — որ ի
շնորհս Հնչակեան վարիչներու, մեր

անարժեքն որ կողմը պիտի խրկեն
զիս այդ տարին... Պիտի խողանք,
պիտի պահենք... Ժիվքա պիտի ա-
ճուսնայ...

Եւ հառաջ մը արձակելէ ետք շա-
բունակեց:

— Ա՛հ, Ժիվքա, գուն ալ պիտի ա-
մուսնանաս ահա... Դուն ալ պիտի ա-
մուսնանաս... պիտի բաժնուրինք ու
պիտի մոռնանք զիրար...:

— Զէ, չէ, չպիտի մոռնանք, մի-
վախար, Սթօյլվա...

Արարեալ ոտքի ելաւ, ծաղիկ մը
փոցուներով սեղանին վրայ դրաւ ու
ըսաւ:

— Զեմ հաւատար թէ պիտի մոռ-
նանք զիրար:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ չես հաւատար:
Կարցուց Ժիվքա չգիտնալով ինչպէս
շնորհակալ ըլլալ այս խորունկ, ան-
կեղծ ձայնին համար՝ ելած մատող
բարեկամու հին սրտէն, որ կրկնեց
աւելի համարձակութեամբ:

— Այլովս տեսնամ, նորէն չեմ հա-
ւատար...

— Ըսէ ինչու, Մարիքա, կը խնդ-
րէր ուսուցչուէին, ըսէ ինչո՞ւր չես
հաւատար... Ի՞նչ կարելի չէ՞...

Պատասխանի տեղ Կոստան ցու-
ցուց զիրքի մէջ դրուած թերթ մը,
զորուն վերնագիրն էր Նիկիթիստուի-
նեոս կեանքը, եւ ձեռագրէն քսաի
մը բաւեր ալ կարդաց:

Ժիվքա փոթաց ձեռքէն խել
թերթն ու ձգեցո Ամենքը միասին
վեր ելան ազգայնոր որ թուղթի չը
զատուէ:

— Ինչո՞ւ, կը պատուես, Զգէ մի
պատուեր...

Սթօյլվա, միշտ ու բախ գուարի,
կատարելի ժողովրդի կարցուց տօքոնանած

Մարիքային:

— Ըսէ, Մարիքա, սիրահարական
նամակ էր, սօքթօրի՞ն համար:

Կօստան պատասխանեց:

— Ոչ, ալ թարգմանութիւն...

Ժիվքա ձեռքն երկարեց արդիւն-
ըն համար որ ալ չըտօի, բայց Ս-
թօյլվան ու Իրինա կը թախանձէին:

— Ըսէ, ըսէ...

Մարիքա չէր համարձակեր ըսել:

— Թարգմանութիւն է, սկսաւ վեր
ջապէս Ժիվքա խառնած ձայնով:

Թուրկէնէֆին սկսեց արքայն ուսա-
նաւորին թարգմանութիւնն է՝ գրք-
ուած, ինչպէս կըսեն, Սօֆիա Բե-
րտիքային համար...

Գիւզային ուսուցչուէին ծափուհա-
րեց:

— Ահա այսպէս կը ըսեն, Ժիվքա
գործել ու միշտ գործել: Գիտես թէ
չպիտի փոխուի...

Կօստան խեղճ թուցուց զարմա-
քէն ու խանդէ:

— Ա՛յ, Թուրկէնէֆին, Թուրկէնէֆին,
Գիտես, Ժիվքա, ես երէկ գիշեր ա-
ւարտեցի «Նիկ», ի՛նչ ծեծաղաչարժ
է այս Բօթուկիւնը...

— «Տիւն», Ես ալ կարդացի, փր-
փաց Իրինա ու լոնց:

— Կարդա՛, կարդա՛, անհամարե-
թեան կը վառէր պապոսյ քուս ու-
սանդուին:

Ժիվքա փոխաւ կարդալ, ձայնը կը
դողողար:

— Այս սե՛՛մը անցնիլ կուզես գիտե՞ս,
Դի՛ն կպասէ ներսը քեզ:

— Գիտեմ:

— Ըսի բա, քաղոյ, արհամարհանք,
հեղձութիւն, ասելութիւն, նախա-

տիւք, բանտ, հիւանդոցութիւն:

— Գիտեմ:

— Առանձնութիւն, լքուում...

Գիտեմ... յօժարայեալ պիտի վեր-
բեմ ամէն տանջանք, ամէն հարուած:

— Ոչ, Իրայն Բիւնալինիքդ, ալ
աղջականերէդ ալ, բարեկամներէդ
ալ:

— Այո, անոնցմէ ալ:

— Լաւ. պատրաստ ես գոհողու-
թեան:

— Այո:

— Անյիշատակ զոհողութիւններօ՞ւ
ալ: Դու պիտի մոռնիս, ու ոչ ոք...

ոչ ոչ պիտի գիտնայ, ու քու յիշա
տակը յարգէ:

— Պէտք չունիմ ոչ երախտագիտու-
թեան, ոչ կարեկցութեան, ոչ ալ
համարի:

— Պատրաստ ես սօքթօրութեան
ալ:

— Այլ զի կը վրոխ ծոնց:

— Ո՞՞րքա գործութեան ալ...

— Գիտե՞ս, շարունակեց սոսկալի
ձայնը — բրածիլ վրայ պիտի գղջաս,
չատ ուչ պիտի հասկնաս թէ խաբ-
ուած ու մատաղ կեանքը բնորոնայն
զոհած ես:

— Կարեալ ալ գիտեմ: Բայց դարձ-
եալ կուզեմ ներս մտնալ:

— Մօի՛ր ուրեմն...

Աղչիկները սարսեցան մտադին,
Սթօյլվան կը գղջար թէ պահ մը
ստալ կասկած յայտնած էր դէպի իր
բարեկամուէին, Իրինա ապշածի պէս
առջեւ կը նայէր անշարժ, Բայց էն
չատ գգածուած է Կօստան — ու ճիշդ
երբոր պիտի գոչէր՝ բացագանչու-
թեամբ մը զինքը խեղդող եռանդը
հեղու համար — ճիշդ այս վայկենին
երկու ելեքորական հոսանքի պէս
անոր փափկակազմ, Իրինային ալ:

նոյն փակ Սթօյլվային ալ մարմին
վրայէն անցան եւ զանոնք ցնցեցին
ժիվքային երկու բառերը, զորս ար-
տասանեց Կարեւ տարբեր ձայնով —

ճշգրիտ նմանողութեան այն սոսկա-
լի ձայնին:

— Ամեմիտո...

Միւսը քաղցր, մեղմ, հառաչանքի
պէս:

— «Սուրբ»:

Եւ սուսեցուցին նայեցաւ, ընկե-
րուէիններուն: Անոր սիրուն աչքերը
կարծես բուն մը կը հարցնէին: Բայց
անոնց բռնութիւնը էն նախատելի,
էն խիստ պատասխանէն աւելի ուժով
զարկաւ անոր ճակատին մինչո՞ւ ձայն
չեն տար, բաւ ինքնորին, ինչո՞ւ
չեն բար թէ ես ինչ եմ — անմօտ թէ
սո՞ւրբ: Ոչ, անոնք բո՛ւն ար-
դէն թէ ես ալ սուրիչներուն պէս
եմ: Ուրիշներուն պէ՛ս, բայց սափ-
կա կը նշանակէ նախադասել... Վար-
նալ... չկրնալ...

— Տուր ինձ այս դիրքը, ըսաւ Կօ-
ստան, ձեռքերը Ժիվքային ուսե-
րուն վրայ նետելով, տուր ինձ անի-
կա... ես բերանացի պիտի սորվիմ ա-
տիկայ — սակէ ետքը իմ ազօթքս պի-
տի ըլլայ այդ ոտանադորը...

— Շատեց Իրինային տալ խոս-
տացած եմ...

Բարեխիտ Իրինան յարեց:

— Դուս առ, Մարիքա, յետոյ ինձ
կուտաս...

Թաւ գնակեց

Անորոնա Յակոբեալ

(Շատուսակի չի)

յոյսերը շախմատներով յուսախա-
բուծեան կը մասնուէր— անուշ արտ-
փանք մը ըլլալու զայն եւս հիմնա-
յատակ տեսնելու անորակելի ու գար-
շելի ի՞նչ մը կը ծնի մեր մէջ, արգա-
րեւ ըսելիք չկայ, մեր այս արտառոց
որ կորստաբեր ձախող փափաքին,
բայց բարեբաղբար Դաշնակցութեան
պարտաճանաչութեանը մասին մեր
յոյսերը շատ զօրաւոր են, ու այդ
հանապազ դժգոհ բարեկամներս չպի-
տի կրնան տեսնել Դաշնակցութեան
այն վիճակին մէջ, որին դժբաղդա-
բար ենթարկուեցաւ հայոց Անդրանիկ
Յեզգիփախկան կուսակցութիւնը, ու
Հնչակեան դրօշին տակ նահատակուող
մարտիկներուն սուրբ յիշատակը,
երբէք չպիտի նսեմանայ մեր սրտերու
մէջ, որչափ ալ նոյն կուսակցութեան
արգի վիճակը ստորնացած ու ինկած
ըլլայ:

Մեր ուշադրութեան առարկայ
պէտք է ըլլայ Հնչակ կամ Դրօշակ,
այլ այն թէ մեր պարտականութիւն-
ները օր-աւուր աւելի սուր կերպ-
րանք աննելու վրայ են, Գուպան
Թրանսպալը, կրեւէն մեզմէ վերջը
վճռական գործողութեան ձեռք զար-
կին սակայն եղբակցութիւններու
յանգեցան, այսօր ալ Մակեդոնիան,
իսկ մենք, գրիթէ ուր որ ենք, հոն
ենք դարձեալ, փոխանակ իրենց կո-
չուսին դաւաճանողները ի բոց վտա-
րելով, բուն յեղափոխական գործող
մարմիններու ուժ տալու, հինգած
ու մեզի արտ դարձած «կըսէ ըսաւ»-
ները կը շարունակենք:

— Թշնամին անընդհատ կը գործէ,
որ ու գրիթ արտասահմանէն իսլամ-
ներ կը քաշէ, մեր ծննդավայրերը,
հայրենական օձախները լեցնելու:
Հոն հայրենիքի գրկին մէջ հայու փը-
ճացման գործը, կանոնաւոր ու ա-
րագ կերպով առաջ կը տանի, իսկ
մենք հոս կաշխատինք ազգին մէջ
միակ կանգուն եւ իր կոչումին հա-
ւատարիմ մնացող, յեղափոխական
մարմինն եւս ջլատելու փորձեր ընել,
այդ փորձեր որչափ ալ աննշան ու
անկարեւոր ըլլան, դարձեալ մեր նը-
կարագրին արատ մը են, ա՛նթ, ու
նախատինք մեզ հարիւր հազարներով
զոհելու արիւնը, բիւրերով լլկուած
մեր քոյրերու պատիւը, կախաղան-
ներու վրայ հարիւրներով ձօճացող
մեր ճիւղան-կտրիճներու գիակները
տակաւին չզգաստացուցին մեզ:
Մեր հայրենիքի աղէտներուն վրայ
քարեր ու սարեր, ցերեկը արեւ,
քիչերը լուսին ու աստղեր լացին, ու
ու մեր մէջէն ստուար մաս մը տա-
կաւին անդալէ, տակաւին իր
զգուելի «Նստին գոհացումը, թշուառ
հայրենիքին արիւն արողունքին մէջ
կուզէ գտնել: Անիկայ թէեւ ըլլայ
հնակարկատ, փերեզակ կամ գործա-
ւոր, կուզէ անպատճառ բան մը ըլ-
լալ, կուզէ ուղեցոյց գառնալ-արտա-
սահմանի մէջ սակայն— թէեւ խելքը
եւ ոչ մէկ բանի հասնի, նոյն իսկ եր-
կու կանոնաւոր խօսք ըսելու անկա-
րող լինի, իր մէջ Եսասիական բռնու
մարմալը կը զգայ, որն որ կը հիւժէ
կը մաշեցնէ զինքը, բնաւ չսիրեր
պարզ զինքը ըլլալ, ու հա կը հաս-
նի նշանաւոր բախտախնդիրը, ան-
խիղճ ու անաստուած կեղեքող շարժ-
քանը, կսկսի շոյել «Նստաւերին սը-
կար ու զգուելի կողմերը, առաջինը
երկրորդին կոյր գործիքը դար-
ձած այլ եւս, միահամուռ գործելու
դասը կը կոնն: Մեծազգորդ յայտա-
րարութիւններ, փայլուն ու վսեմ
խոստումներ, ու ժամանակ մը չա-

հազործել վերջ, անհաստատու-
թեան սղեղ ունեւելեղով իրենց զրգ-
ուելի ներքինը մերկապարանոց երե-
ւան կուգայ, Անդամ մը եւս փող-
վուրդը դառն կակիծով կզգայ իր չա-
րաշար խաբուած ըլլալը, սակայն ո՞վ
է մեղադրելին, ա՛յն որ ըստ պա-
հանջման իր նկարագրին, ստէպ խա-
բեց, թէ ա՛յն որ սիրեց միշտ միա-
մտաբար խաբուել:

Այրսի-Որդեկիր

Պատ. Խմբագրութիւն «Շար-
ժում» լրագրոյ:

Ենթահայկալու թեմամբ կը ծա-
նուցանենք թէ՛ ի նպատակ 2էյ-
թունի հիւանդ մանուկներուն՝
քաղաքիս ազգայնոց մէջ կա-
տարուած հանգանակութեան ար-
դիւնքը յանդած է 833 (ու թը
հարիւր երեսուն երեք) լէվի:

Թանձնախումբս սոյն գումարը
Պատրիարքարան յղած է՝ խնդ-
րելով որ ուղղակի իր նպատա-
կին յաւակցուի:

Ի դիմաց Ազգ. գործ. կարգ.
յանձնախումբի
Ատենադպիր Ատենապետ
Տօթ. Օրմանեան Երուանդ Գիւրտեան
10 Յունիս 1903
Փիլիպէ

... Խմբագիր

Այսօր մանտարատով ձեր հասցէին
կը գրկենք Վառնայի Թաղականու-
թեան յանձնուելիք 30 երեսուն Փը-
րանքը ի նպատակ 2էյթունի կարօտե-
լոց եւ կազաչենք բարեհաճիք ձեր
յարգելի լրագրին մէջ հրատարակելու
Պ. Կարապետ Մարտիրոսեանէ 10 Փ.
Յովհաննէս Զաքարեանէ 10 Փր. Թո-
րոս Խաչիկեանէ 5 Փ., մի մմն 5 Փր.
Ընդունեցէք մեր յարգանքներ ի
դիմաց Դաւաճաթի գաղթականութեան
Յովհաննէս Զաքարեան
9 Յունիս 1903
Գալաֆաթ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Այս անգամ «Դրօշակ»-ի մայիս-
եան համարի մէջ Հ. Յ. Պ. Արեւ-
մտեան Բիւրօն բացատրութիւն
մը տալով Հնչակեաններու հետ
միութեան մասին ըրած բանակ-
ցութիւններու մասին, և պար-
զելով այդ կազմակերպութեան իր
կոչմանը բարձրութեան վրայ չը
գտնուելը կը յայտարարէ որ ինք
այլեւս չի կրնար միջնորդ ըլլալ
Դաշնակցութեան և Հնչակեաննե-
րու միջեւ:

— Ենձնասպան բարեգործ Առա-
քէլ Մատուրեան 100,000 ռուբլի
կտակեր է իր ազգականներու, և
70,00 ռուբլի պանդան բարե-
գործական հաստատութեանց:
Թողուցեր է և քանի մը նամակ-
ներ փոստին մարքաներով միա-
սին: Նամակները ուղղուած են
Կաթողիկոսին, Ալէք. Իճանթաշ-
եղեանին, Եանին և ուրիշ քանի
մը անձերու:
Իր կեանքին մէջ խոշոր բարե-

գործութիւններ ընող Մատուր-
եանին վերջին փոքրիկ կտակը
հասարակական հաստատութիւն-
ներու համար ապացուց է որ ա-
նոր գործերը ձախ կերթային:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրթական նախարար Պ. Երչ-
մտնօն Պուլկարիոյ կրթական
գործը բարենորոգելու համար
ժրագիր մը մշակել է, բաւական
նշատակալարմար, և ներկայա-
ցուցեր է Իշխանին: Իշխանը
մակազրած է որ այդ ծրագիրը
ամբողջովին կը քաջալուրէ:

— Պուլկար թերթերը կը հա-
լարգեն որ վարչական պաշտօն-
եաներու մեծ փոփոխութիւններ
տեղի պիտի ունենան, որովհե-
տեւ Իշխանի և ներկայ նախա-
րարութեան միջեւ համաձայնու-
թիւն կայացեր է պաշտօնեաներու
անփոփոխելիութեան մասին Ե-
րած նոր օրէնքը առ այժմ չը
գործադրել:

— Սօֆիոյի հիւրանոցներէն մի
ոյն մէջ բաւական խոշոր գողու-
թիւն մը պատահեր է անցեալ օ-
րերը: Հիւրանոցին մէջ գանուող
կոմսոհի Բէպէնտիլի գոհարե-
լէնները գողցեր էին հիւրանոցի
աղախնի օգնութեամբ:
Ստրկանութիւնը յաջողել է
գողերը ձերբակալել, սահմանա-
դրելով վրայ:

— Նոր նախարար Պ. Տր. Կրնատի
էֆ նոր օրինագիծ մը կը պատ-
րաստէ հայտարար դատարանե-
րուն համար, որոնք 40 տարե-
կանէն պակաս չը պիտի ըլլան,
կոչնագրեր չը պիտի զրկեն այլ
պիտի պատին գիւղերը և հոն
պիտի մէկ անգամէն դատերը
տեսնան: Գիւղական հասարակու-
թեան դատարան տեղն պիտի
խուր տուգանք ենչ օրկելու ի-
րաւունքը, որովհետեւ կուսակ-
ցական հաշիւներով կը զեկավար-
ուին: Եւ ուրիշ շատ մը փոփո-
խութիւններ, որոնց նպատակն է
ժողովուրդին համար դիւրացնել
դատական գործերը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Աւստրիական և Ռուսական դե-
պանները Բ. Դունէն մանրամասն
անդեկագիր մը ընդունեն են Մա-
կեդոնական հրոսախմբերու յար-
ձակումներու մասին: Մայիս 30էն
մինչեւ յունիս 8ը երեք նահանգ-
ներու մէջ թուրք զինուորները
70 անգամ ընդհարում ունեցե-
ր են հրոսախմբերուն հետ, որոնց
միջոցին սպանուած են 128 Մա-
կեդոնացիներ և 22 թուրք զին-
ուորներ: Իւրեք իշխանութիւն-
ները 123 անգամ գտեր են Սասա
գիւղին քղերը:

— Բ. Դուն մտտիկ շրջանակ-
ներու մէջ կրօնն որ Սօֆիայէն
հաղորդուած լուրի թուրք և Պուլ-
կար սահմանապահ զինուորներու
ընդհարումի մասին գեռ տեղե-
կագիրը չէ ստացուած:

— Պուլկար իտալական դեպա-
նատան կցորդը որ կցորդ է նաեւ
Աթինայի, Պելկրատի ու Սօֆիայի
դեպանատներու, Սօֆիայի մէջ
կարծիք յայտնած է որ Եթէ Պուլ-
կարիան 15 միլիոն ֆրանք ծախ-
սէ պակաս գէնքերը լրացնելու
համար մէկ ամսվան մէջ պիտի
կարենայ գրաւել Մակեդոնիան:

ՌՈՒՍԻԱ

Յարը 1902ի զինուորակոչութե-
նէ փախուստ տուող Յինլանտացի-
ներուն ներք է և նահանգապե-
տին հրամայեր է բոլոր փախը-
ստական զինուորներուն ոչ մէկ
պատժի չը ենթարկել երբ ա-
նոնք ներկայանան զինուորու-
թիւն ընելու:

Յարին այդ քայլը աղէկ տպա-
ւորութիւն գործեր է Յինլանտա-
ցիներուն վրայ:

— Ալախիվոստօքէն ունիվըս Կը-
րէմայի կը հեռագրեն որ պա-
տերազմական նախարար Քուրա-
բովին որ ձաբոնիայի այցելու
թեան գացած է, դեռ քանի մը
օր ալ պիտի մնայ հոն որովհե-
տեւ ձաբոնիները շատ սիրալիք
կերպով ընդունեն են զինքը:
Նոյն թերթը կը կարծէ որ ձաբո-
նի և Ռուսիոյ յարաբերութիւն-
ները գոհացուցիչ ընթացք մը
ընդունած կերբեն:

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Մայիսի վերջերս Խաղիլի մէջ
պարսիկ ամբիւր կրօնաւորներու
թեւադրութեամբ և գրգռումով
ոտքի կանգնելով կառավարութե-
նէն պահանջեր է գոցել Եւրոպա-
կան սիստեմի դպրոցները, ար-
տաքսի բոլոր եւրոպացի և քրիս-
տոնիա պաշտօնիաները: Կառա-
վարութիւնը չը կարենալով դի-
մագրել ամբիւրին անոր պահանջ-
ները կատարեր է:

Գրիստոնիաները բաւական նի-
թական զնաններ կրեր են:

ԽԱՏՐՕՆ ՌԻԿԱ

Վաղը հինգշաբթի գիշեր Հաճի
Բանաքօ Ռիկայի պարէզը «Նա-
տէժտա» հայ դերասանական
խումբին կողմէ պիտի ներկայաց-
ուի «Նոննոգերու բժիշկը» խիստ
ծիծաղաշարժ զաւելյա մը 1 ա-
րար: Պարսկան ինքն կամ Պաք-
թուէլ թաւքերը ի մի յառաջա-
բան և երեք արարուած:

ՕՏՎՈՐՈՒՆԻԿ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна